ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-21-14/1-1

ք. Երևան 19.05.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ս.Ա.Ն. ԲՐԱՅԹ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Վարդերեսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 963,987 (ինը հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 15 բանկային օրվա ընթացքում պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Ապրանքները հանդիսանում են հիմնական միջոց և երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16.Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ս.Ա.Ն. ԲՐԱՅԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, Մելքոնյան 2-րդ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	փակ. տուն 8
Հ/Հ 900011024537	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 1570072392290100
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	ՀՎՀՀ 03557182
	տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Կ. ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ *

Ապրանքի							
Հ/հ	Այ Էս Բի Էն ISBN	վերնագիր	հեղինակ	էջերի քանակ	տարեթիվ	լեզու	հրատարակիչ
1	978-5-406-05663-9	գրադարանի գրքեր/ Պոդգոտովկա ի վեդենիե բուխիխ դելովիյ վ լոկալնիխ վոյնախ ի վոորուժոննիխ կոնֆլիկտախ. Ուչեբնոե պոսոբիե	րեդ. Բատյուշկին Ս.	438	2020	Ռուսերեն	Կնորուս
2	5-02-034029-4	գրադարանի գրքեր/Տրանսֆորմացիա վոեննոյ էկոնոմիկի. XX - նաչալո XXI վեկա	Ֆարամազյան Ռ., Բորիսով Վ.	344	2006	Ռուսերեն	Նաուկա
3	978-5-496-01644-5	գրադարանի գրքեր/Էկոնոմիկա: Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	Եֆրեմով Օ.	352	2015	Ռուսերեն	Պիտեր
4	9789939642703	գրադարանի գրքեր/Պետական և մունիցիպալ կառավարում: Ուսումնական ձեռնարկ	Սուվարյան Յու., Չոբանյան Մ.	708	2017	Հայերեն	Լիմուշ
5	5-7117-0319-6	գրադարանի գրքեր/Վոեննո-վոզդուշնիե սիլի	Րյազանցև Վ. Գ.	416	2001	Ռուսերեն	Գոյոս-Պոեսս
6	978-5-85875-519-7	գրադարանի գրքեր/Օտեչեստվեննիյ օպիտ գոսուդարստվեննիխ ի վոեննիխ օռգանով վ սոզդանիի պրոտիվոռակետնոյ օրոոնի. Իստորիա ի պոլիտիկա	Մատվեև Օ.	176	2017	Ռուսերեն	Գանգուտ
7	978-5-9710-7125-9	գրադարանի գրքեր/Անգլո-ռուսսկիյ սլովար վոեննոգո սլենգա / Ինգլիշ-Ռաշըն Դիքշընըրի օֆ Միլիթըրի Սլենգ	Դամինովա Ս.	96	2020	Ռուսերեն	Լենանդ
8	978-5-699-23223-9	գրադարանի գրքեր/Վոեննիյ էնցիկլոպեդիչեսկիյ սլովար	Ավերյանով Յու. Տ., Վոլկովա Վ. Ի., Վոժժով Գ. Ա.	1024	2007	Ռուսերեն	Էկսմո
9	978-5-17-110727-7	գրադարանի գրքեր/Տանկի. Իլլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	Խասկյու Մայքլ Ե.	304	2018	Ռուսերեն	ԱՍՏ
10	978-5-17-102212-9	գրադարանի գրքեր/Վսյո օ տանկախ	Կատորին Յու. Ֆ., Վոլկովսկիյ Ն. Լ.	512	2019	Ռուսերեն	ԱՍՏ
11	978-601-302-612-1	գրադարանի գրքեր/Ստրելկովոե օռուժիե. Ս 1945 գոդա պո նաստոյաշչյե վրեմյա	Դոերտի Մարտին Ջ.	192	2017	Ռուսերեն	Ֆոլիանտ
12	978-5-17-109854-4	գրադարանի գրքեր/Ստրելկովոե օռուժիե. Իլլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	Զալեսսկիյ Կ., Կլիմովա Օ.	448	2018	Ռուսերեն	ԱՍՏ
13	978-5-465-00767-2	գրադարանի գրքեր/Արտիլլերիա. Իլլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	Շանթ Կրիս	256	2009	Ռուսերեն	Օմեգա
14	978-5-406-01191-1	գրադարանի գրքեր/Տակտիկա արտիլլերիի. (Վոեննայա պոդգոտովկա). Ուչեբնոե պոսոբիե	Լիտվինենկո Վ.	344	2020	Ռուսերեն	Կնորուս
15	978-5-699-99721-3	գրադարանի գրքեր/Տայնիե օպերացիի վոեննոյ ռազվեդկի	Բոյտունով Մ.	320	2017	Ռուսերեն	Էկսմո
16	978-5-16-015058-1	գրադարանի գրքեր/Պոդգոտովկա պո սվյազի. Ուչեբնոե պոսոբիե	Լեպեշինսկիյ Ի.	124	2019	Ռուսերեն	Ինֆրա-Մ
17	5-94538-036-9	գրադարանի գրքեր/Վոյնի շեստոգո պոկոլենիա. Օռուժիե ի վոեննոե իսկուսստվո բուդուշչեգո	Սլիպչենկո Վ. Ի.	384	2002	Ռուսերեն	Վեչե
18	978-5-238-03355-6	գրադարանի գրքեր/Ասպեկտ-իզրաիլսկոե պրոտիվոբորստվո. Վզգլյադ իստորիկով	Խազանով Ա., Օլիմպին Ա.	231	2020	Ռուսերեն	Յունիտի-Դանա
19	5-86090-064-3	գրադարանի գրքեր/Իստորիա վոեննոյ ստրատեգիի Ռոսսիի	Զոլոտարյով Վ. Ա.	592	2000	Ռուսերեն	Կուչկովո պոլե
20	978-5-7133-1428-6	գրադարանի գրքեր/ՍՇԱ: վոեննայա էկոնոմիկա	Ֆյոդորովիչ Վ., Ստավնիկ Վ., Բոչկարյով Օ.	616	2018	Ռուսերեն	Մեժդունարոդնիե օտնոշենիա
21	978-5-282-03286-4	գրադարանի գրքեր/Տոչնոե օռուժիե: Էլեմենտնայա բազա սոզդանիա ՊՎՆ, ինտելլեկտուալնիե սրեդստվա օբոռոննոգո պրոիզվոդստվա	Լյաշչենկո Վ. Պ.	398	2013	Ռուսերեն	Էկոնոմիկա
23	978-5-496-01332-1	գրադարանի գրքեր/Ֆիլոսոֆիա. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	Եֆրեմով Օ., Գուբանով Վ.	464	2017	Ռուսերեն	Պիտեր
24	978-5-496-01648-3	գրադարանի գրքեր/Պսիխոլոգիա. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	Ռատկին Ն., Մենշիկով Ա.	464	2015	Ռուսերեն	Պիտեր
25	978-5-4461-1045-2	գրադարանի գրքեր/Կուլտուրոլոգիա. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	րեդ. Եֆրեմով Օ.	448	2019	Ռուսերեն	Պիտեր
26	978-5-9614-6755-0	գրադարանի գրքեր/Լիդերստվո. Հարվարդ Բիզնես Ռիվյու 10 լուչշիխ ստատեյ		224	2019	Ռուսերեն	Ալպինա Պաբլիշեր

27	978-5-534-25904-1	գրադարանի գրքեր/Տեխնոլոգիա լիդերստվա. Հարվերդի Բիզնես Սքուլ III լուսշիխ ստատուս		156	2020	Ռուսերեն	Այնպինա Պաբլիշեր
28	978-5-9916-4361-6	գրադարանի գրքեր/Լիդերստվո. Ուսերնին ի պրակտիկում	Սելեզնյովա Ս.	432	2017	Ռուսերեն	Յուրայտ
29	978-5-534-05665-1	գրադարանի գրքեր/Փսիխոլոգիա վոյնի. Պրոֆիլակտիկա առաջանիա. պովեդենիա ի ռեաբիլիտացիոնտի լյուդեյ	Ռեշետնիկով Մ.	336	2019	Ռուսերեն	Յուրայտ
30	978-5-98124-708-8	գրադարանի գրքեր/Տեխնոլոգիա լիդերստվա	Տառասով Վ.	240	2018	Ռուսերեն	Դոբրայա կնիգա
31	978-1794641518	գրադարանի գրքեր/Էքոնոմի օֆ Ազերբայջան (Էքոնոմի ըն քանթրիս)	Իվան Կուշնիր	55	2019	Անգլերեն	Ինդեփենդլի փաբլիշեդ
32	978-5-9912-0782-9	գրադարանի գրքեր/ՆԱՏՕ վ սովրեմենոյ միռովոյ պոլիտիկե	Բարտոշ Ա.	364	2019	Ռուսերեն	Գորյաչայա լինիա - Տելեկոմ
33	5-94935-064-2	գրադարանի գրքեր/Վոեննայա զեոգրաֆիա դլյա պրոֆեսիոնալով ի նեպրոֆեսսիոնալով	Ջոն Մ. Կոլլինզ	568	2005	Ռուսերեն	Նաուչնայա կնիգա
34	978-5-903360-84-0	գրադարանի գրքեր/Սոցիալնայա պոլիտիկա վ սիստեմե գոսաժդանսկո-վոեննիխ օտնոշենիյ	Սուսկովա Ի.	376	2013	Ռուսերեն	Վարիանտ
35	978-5-9912-0785-0	գրադարանի գրքեր/Տուման գիբրիդնոյ վոյնի. Ներարեգեյոննոստի ի բիսկի կոնֆլիկտով XXI վեկա	Բարտոշ Ա.	324	2019	Ռուսերեն	Գորյաչայա լինիա - Տելեկոմ
36	978-5-9912-0823-9	գրադարանի գրքեր/Ինֆորմացիոնիե ի գիբրիդնիե կոնֆլիկտի. Ուչեբնոե պոսոբիե դլյա վուզով	Մանոյլո Ա.	464	2019	Ռուսերեն	Գորյաչայա լինիա - Տելեկոմ
37	5-93431-007-0	գրադարանի գրքեր/Գտոռ եատ կտոռ վ վոենոյ իստորիի. Սլովար	Կիզան Ջոն, Ուիտնրոֆտ Էնդրյու	432	2000	Ռուսերեն	Դոգրաֆ
38	978-5-17-103925-7	գրադարանի գրքեր/Տանկի ի բոռնոտեխնիկա	Լիկսո Վ. Վ., Պրոկազով Բ. Բ.	128	2017	Ռուսերեն	ԱՍՏ
39	978-5-17-102223-5	գրադարանի գրքեր/Սամոե սովրեմենոե օռուժիե ի բոեվայա տեխնիկա	Միտին Լ. Ե.	512	2019	Ռուսերեն	ԱՍՏ
40	978-5-9906914-0-7	գրադարանի գրքեր/Օռուժիե սովրեմենիխ վոյն. Բռեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոռուժենիա ի մեռի պոռտիվոդեյստվիա իխ պրիմենենիյու	Վալեցկիյ Օ. Վ.	264	2015	Ռուսերեն	Ցենտռ ստրատեգիչեսկոյ կոնյունկտուրի
41	5-288-03487-7	գրադարանի գրքեր/Ռազվեդկա ի կոնտռռազվեդկա	Ռոնգե Մաքսիմիլիան	330	2004	Ռուսերեն	ՍՊԲԳՈՒ
42	978-5-534-12619-8	գրադարանի գրքեր/Կուլտուռոլոգիա ի վոեննոե դելո. Ուչեբնոե պոսոբիե դլյա վուզով	Վերշիլով Ս., Շակիռովա Ե.	156	2020	Ռուսերեն	Յուրայտ
43	978-5-9906914-0-7	գրադարանի գրքեր/Օռուժիե սովրեմենիխ վոյն. Բռեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոռուժենիա ի մեռի պոռտիվոդեյստվիա իխ պրիմենենիյու	Վալեցկիյ Օ. Վ.	264	2015	Ռուսերեն	Ցենտռ ստրատեգիչեսկոյ կոնյունկտուրի
44	978-5-17-106342-9	գրադարանի գրքեր/Սովրեմենոե օռուժիե. Իլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	Դոգերտի Մ., Էդեն Պ., Մոէն Ս.	448	2016	Ռուսերեն	ԱՍՏ
45	978-1507855577	գրադարանի գրքեր/Օն Օփերեշընալ Արթ	Սենթր օֆ Միլիթրի Հիսթրրի Յունիթեդ Սթեյթս Արմի	230	2015	Անգլերեն	ԳրեյթՍփեյս Ինդրփենդրնթ Փաբլիշինգ Պլատֆորմ
46	978-5-4444-4577-8	գրադարանի գրքեր/Վոեննոե իսկուսստվո վեռմախտա. Օտ բլիցկրիգա դո պոռաժենիա	Ռուռով Վ. Ա.	496	2016	Ռուսերեն	Վեչե
47	978-1494407155	գրադարանի գրքեր/16 Քեյս օֆ Միշըն Քըմանթ	Դոնալդ Պ. Բայթ	218	2013	Անգլերեն	ԳրեյթՍփեյս Ինդրփենդրնթ Փաբլիշինգ Պլատֆորմ

*Ծանոթություն.

1. Գրքերը պետք է լինեն պաշտոնական հրատարակության և պաշտպանված լինեն հեղինակային և հարակից իրավունքներով:
2. Մատակարարման ենթակա ապրանքները հանդիսանում են հիմնական միջոցներ, որոնց երաշխիքային ժամկետն է 365 օր:
3. Առաքման վայրը՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, ք. Երևան, Կ.Ուլնեցու 56/6:
4. Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան (ք. Երևան, Կ. ՈՒլնեցու 56/6) մատակարար կազմակերպության տրանսպորտով:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Կոդը	Չ/Մ	Քանակ	Միավորի գին /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Մատակարարման ժամկետը
1	գրադարանի գրքեր/ Պոդգոտովկա ի վեդենիե բոեվիխ դեյստվիյ վ լոկալնիխ վոյնախ ի վոոռուժոննիխ կոնֆլիկտախ. Ուչեբնոե պոսոբիե	22111120/1/10/2	հատ	3	22,333	66,999	2021 թ. օգոստոս
2	գրադարանի գրքեր/Տրանսֆոռմացիա վոեննոյ էկոնոմիկի. XX - նաչալո XXI վեկա	22111120/2/10/2	հատ	3	5,333	15,999	2021 թ. օգոստոս
3	գրադարանի գրքեր/Էկոնոմիկա: Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	22111120/3/10/2	հատ	3	14,333	42,999	2021 թ. օգոստոս
4	գրադարանի գրքեր/Պետական և մունիցիպալ կառավարում: Ուսումնական ձեռնարկ	22111120/4/10/2	հատ	3	8,333	24,999	2021 թ. օգոստոս
5	գրադարանի գրքեր/Վոեննո-վոզդուշնիե սիլի	22111120/5/10/2	հատ	3	12,000.00	36,000	2021 թ. օգոստոս
6	գրադարանի գրքեր/Օտեչեստվեննիյ օպիտ գոսուդարստվեննիխ ի վոեննիխ օռգանով վ սոզդանիի պռոտիվոռակետնոյ օբոռոնի. Իստորիա ի պոլիտիկա	22111120/6/10/2	հատ	3	8,666	25,998	2021 թ. օգոստոս
7	գրադարանի գրքեր/Անգլո-ռուսսկիյ սլովար վոեննոգո սլենգա / Ինգլիշ-Ռաշըն Դիքշընըրի օֆ Միլիթըրի Սլենգ	22111120/7/10/2	հատ	3	5,333	15,999	2021 թ. օգոստոս
8	գրադարանի գրքեր/Վոեննիյ էնցիկլոպեդիչեսկիյ սլովար	22111120/8/10/2	հատ	3	17,333	51,999	2021 թ. օգոստոս
9	գրադարանի գրքեր/Տանկի. Իլլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	22111120/9/10/2	հատ	3	17,000.00	51,000	2021 թ. օգոստոս
10	գրադարանի գրքեր/Վայն օ տանկախ	22111120/10/10/2	հատ	3	12,000.00	36,000	2021 թ. օգոստոս
11	գրադարանի գրքեր/Ստրելկովոե օռուժիե. Ս 1945 գոդա պո նաստոյաշչե վրեմյա	22111120/11/10/2	հատ	3	12,333	36,999	2021 թ. օգոստոս
12	գրադարանի գրքեր/Ստրելկովոե օռուժիե. Իլլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	22111120/12/10/2	հատ	3	18,666	55,998	2021 թ. օգոստոս
13	գրադարանի գրքեր/Արտիլլերիա. Իլլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	22111120/13/10/2	հատ	3	16,000.00	48,000	2021 թ. օգոստոս
14	գրադարանի գրքեր/Տակտիկա արտիլլերիի. (Վոեննայա պոդգոտովկա). Ուչեբնոե պոսոբիե	22111120/14/10/2	հատ	3	22,333	66,999	2021 թ. օգոստոս
15	գրադարանի գրքեր/Տայնիե օպեռացիի վոեննոյ ռազվեդկի	22111120/15/10/2	հատ	3	6,333	18,999	2021 թ. օգոստոս
16	գրադարանի գրքեր/Պոդգոտովկա պո սվյազի. Ուչեբնոե պոսոբիե	22111120/16/10/2	հատ	3	14,000.00	42,000	2021 թ. օգոստոս
17	գրադարանի գրքեր/Վոյնի շեստոգո պոկոլենիա. Օռուժիե ի վոեննոե իսկուսստվո բուդուշչեգո	22111120/22/10/2	հատ	1	14,000	14,000	2021 թ. օգոստոս
18	գրադարանի գրքեր/Արաբո-իզրաիլսկոե պրոտիվոբորստվո. Վզգլյադ իստորիկով	22111120/23/10/2	հատ	1	16,000	16,000	2021 թ. օգոստոս
19	գրադարանի գրքեր/Իստորիա վոեննոյ ստրատեգիի Ռոսսիի	22111120/24/10/2	հատ	1	9000	9000	2021 թ. օգոստոս
20	գրադարանի գրքեր/ԱՄՆ: վոեննայա էկոնոմիկա	22111120/25/10/2	հատ	1	16,000	16,000	2021 թ. օգոստոս
21	գրադարանի գրքեր/Տոչնոե օռուժիե: Էլեմենտնայա բազա ադզդանիա ՊՎՆ, ինտելլեկտուալնիե սրեդստվա օբոռոննոգո պրոիզվոդստվա	22111120/26/10/2	հատ	1	13,000	13,000	2021 թ. օգոստոս
23	գրադարանի գրքեր/Ֆիլոսոֆիա. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	22111120/28/10/2	հատ	1	10,000	10,000	2021 թ. օգոստոս
24	գրադարանի գրքեր/Պռավովեդենիե. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	22111120/29/10/2	հատ	1	12,000	12,000	2021 թ. օգոստոս
25	գրադարանի գրքեր/Կուլտուրոլոգիա. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	22111120/30/10/2	հատ	1	11,000	11,000	2021 թ. օգոստոս
26	գրադարանի գրքեր/Լիդերստվո. Հարվըրդ Բիզնըս Ռիվյու 10 լուչշիխ ստատեյ	22111120/31/10/2	հատ	1	7,000	7,000	2021 թ. օգոստոս
27	գրադարանի գրքեր/Փսիխոլոգիա լիդերստվա. Հարվըրդ Բիզնըս Ռիվյու 10 լուչշիխ ստատեյ	22111120/32/10/2	հատ	1	9,000	9,000	2021 թ. օգոստոս
28	գրադարանի գրքեր/Լիդերստվո. Ուչեբնիկ ի պրակտիկում	22111120/33/10/2	հատ	1	16,000	16,000	2021 թ. օգոստոս
29	գրադարանի գրքեր/Փսիխոլոգիա վոյնի. Պռոգնոզիռովանիե սոստոյանիա, պովեդենիա ի դեյատելնոստի լյուդեյ	22111120/34/10/2	հատ	1	18,000	18,000	2021 թ. օգոստոս
30	գրադարանի գրքեր/Տեխնոլոգիա լիդերստվա	22111120/35/10/2	հատ	1	7,000	7,000	2021 թ. օգոստոս
31	գրադարանի գրքեր/Էքոնոմի օֆ Ազերբայջան (էքոնոմի ըն քանթրիս)	22111120/36/10/2	հատ	1	9,000	9,000	2021 թ. օգոստոս

32	գրադա[illegible] [illegible] ՆԱՏՕ վ սովրեմեն[illegible] միռովոյ պոլիտիկե	22111120/37/10/2	հատ		12,000	12,000	2021 թ. օգոստոս
33	գրադարանի գրքեր/Վոեննայա գեոգրաֆիա դլյա պրոֆեսիոնալով ի նեպրոֆեսիոնալով	22111120/38/10/2	հատ	1	7,000	7,000	2021 թ. օգոստոս
34	գրադարանի գրքեր/Սոցիալնայա պոլիտիկա վ սիստեմե գոսուդարստվենո-վոեննիխ օտնոշենիյ	22111120/39/10/2	հատ	1	7,000	7,000	2021 թ. օգոստոս
35	գրադարանի գրքեր/Տուման գիբրիդնոյ վոյնի. Նեօպրեդելյոննոստի ի րիսկի կոնֆլիկտով XXI վեկա	22111120/40/10/2	հատ	1	11,000	11,000	2021 թ. օգոստոս
36	գրադարանի գրքեր/Ինֆորմացիոննիե ի գիբրիդնիե կոնֆլիկտի. Ուչեբնոե պոսոբիե դլյա վուզով	22111120/41/10/2	հատ	1	11,000	11,000	2021 թ. օգոստոս
37	գրադարանի գրքեր/Կտո եստ կտո վ վոեննոյ իստորիի. Սլովար	22111120/42/10/2	հատ	1	7,000	7,000	2021 թ. օգոստոս
38	գրադարանի գրքեր/Տանկի ի բրոնետեխնիկա	22111120/43/10/2	հատ	1	9,000	9,000	2021 թ. օգոստոս
39	գրադարանի գրքեր/Սամոե սովրեմեննոե օրուժիե ի բոևայա տեխնիկա	22111120/44/10/2	հատ	1	11,000	11,000	2021 թ. օգոստոս
40	գրադարանի գրքեր/Օրուժիե սովրեմեննիխ վոյն. Բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոօրուժենիա ի մերի պրոտիվոդեյստվիա իխ պրիմենենիյու	22111120/45/10/2	հատ	1	7,000	7,000	2021 թ. օգոստոս
41	գրադարանի գրքեր/Ռազվեդկա ի կոնտռռազվեդկա	22111120/46/10/2	հատ	1	6,000	6,000	2021 թ. օգոստոս
42	գրադարանի գրքեր/Կոլլտուրոլոգիա ի վոեննոե դելո. Ուչեբնոե պոսոբիե դլյա վուզով	22111120/47/10/2	հատ	1	8,000	8,000	2021 թ. օգոստոս
43	գրադարանի գրքեր/Օրուժիե սովրեմեննիխ վոյն. Բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոօրուժենիա ի մերի պրոտիվոդեյստվիա իխ պրիմենենիյու	22111120/48/10/2	հատ	1	7,000	7,000	2021 թ. օգոստոս
44	գրադարանի գրքեր/Սովրեմեննոե օրուժիե. Իլյուստրիրովաննայա էնցիկլոպեդիա	22111120/49/10/2	հատ	1	16,000	16,000	2021 թ. օգոստոս
45	գրադարանի գրքեր/Օն Օփրրեշընլը Արթ	22111120/50/10/2	հատ	1	15,000	15,000	2021 թ. օգոստոս
46	գրադարանի գրքեր/Վոեննոե իսկուսստվո վեռմախտա. Օտ բլիցկրիգա դո պորաժենիա	22111120/51/10/2	հատ	1	5,000	5,000	2021 թ. օգոստոս
47	գրադարանի գրքեր/16 Քեյս օֆ Միշըն Քըմանդ	22111120/52/10/2	հատ	1	21,000	21,000	2021 թ. օգոստոս

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ս.Ա.Ն. ԲՐԱՅԹ» ՍՊԸ տնօրեն

Կ. ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

«Ս.Ա.Ն. ԲՐԱՅԹ» «S.A.N. BRIGHT» «С.А.Н. БРАЙТ» 03557182

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., այդ թվում**		
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	22111120/1/10/2	գրադարանի գրքեր/ Պոդգոտովկա ի վեդենիե բոեվիխ դեյստվիյ վ լոկալյնիխ վոյնախ ի վոոռուժենիխ կոնֆլիկտախ. Ուչեբնառ պոսոբիե	66,999	66,999	66,999
2	22111120/2/10/2	գրադարանի գրքեր/Տրանսֆորմացիա վոենոյ էկոնոմիկի. XX - նաչալո XXI վեկա	15,999	15,999	15,999
3	22111120/3/10/2	գրադարանի գրքեր/Էկոնոմիկա: Ուչեբնիկ դլյա վոենիխ վուզով	42,999	42,999	42,999
4	22111120/4/10/2	գրադարանի գրքեր/Պետական և մունիցիպալ կառավարում: Ուսումնական ձեռնարկ	24,999	24,999	24,999
5	22111120/5/10/2	գրադարանի գրքեր/Վոեննո-վոզդուշնիե սիլի	36,000	36,000	36,000
6	22111120/6/10/2	գրադարանի գրքեր/Օտեչեստվեննիյ օպիտ գոսուդարստվեննիխ ի վոեննիխ օրգանով վ սոզդանիի պրոտիվորակետոյ օբորոնի. Իստորիա ի պոլիտիկա	25,998	25,998	25,998
7	22111120/7/10/2	գրադարանի գրքեր/Անգլո-ռուսկիյ սլովար վոենոգո սլենգա / Ինգլիշ-Ռաշըն Դիքշընարի օֆ Միլիթրի Սլենգ	15,999	15,999	15,999
8	22111120/8/10/2	գրադարանի գրքեր/Վոեննիյ էնցիկլոպեդիչեսկիյ սլովար	51,999	51,999	51,999
9	22111120/9/10/2	գրադարանի գրքեր/Տանկի. Իլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	51,000	51,000	51,000
10	22111120/10/10/2	գրադարանի գրքեր/Կայո օ տանկախ	36,000	36,000	36,000
11	22111120/11/10/2	գրադարանի գրքեր/Ստրելկովոե օռուժիե. Ս 1945 գոդա պո նաստոյաշչյե վրեմյա	36,999	36,999	36,999
12	22111120/12/10/2	գրադարանի գրքեր/Ստրելկովոե օռուժիե. Իլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	55,998	55,998	55,998
13	22111120/13/10/2	գրադարանի գրքեր/Առտիլլերիա. Իլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	48,000	48,000	48,000
14	22111120/14/10/2	գրադարանի գրքեր/Տակտիկա առտիլլերիի. (Վոեննայա պոդգոտովկա). Ուչեբնոե պոսոբիե	66,999.	66,999.	66,999.
15	22111120/15/10/2	գրադարանի գրքեր/Տայնիե օպեռացիի վոեննոյ ռազվեդկի	18,999	18,999	18,999

16	22111120/16/10/2	գրադարանի գրքեր/Պոդրոտովկա պո սվյազի Ուչեբնոե պոսոբիե	42,000	42,000	42,000
17	22111120/22/10/2	գրադարանի գրքեր/Վոյնի շեստոգո պոկոլենիա. Օռուժիե ի վոեննոե իսկուսստվո բուդուշչեգո	14,000	14,000	14,000
18	22111120/23/10/2	գրադարանի գրքեր/Առաբո-իզրաիլսկոե պրոտիվոբառստվո. Վզգլյադ իստորիկով	16,000	16,000	16,000
19	22111120/24/10/2	գրադարանի գրքեր/Իստորիա վոեննոյ ստրատեգիի Ռոսսիի	9000	9000	9000
20	22111120/25/10/2	գրադարանի գրքեր/ՍՇԱ: վոեննայա էկոնոմիկա	16,000	16,000	16,000
21	22111120/26/10/2	գրադարանի գրքեր/Տոռգովլյա օռուժիեմ: Էլեմենտնայա բազա սոզդանիա ՊՎՆ, ինտելլեկտուալնիե սրեդստվա օբռոռոնոզո պրոիզվոդստվա	13,000	13,000	13,000
23	22111120/28/10/2	գրադարանի գրքեր/Ֆիլոսոֆիա. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	10,000	10,000	10,000
24	22111120/29/10/2	գրադարանի գրքեր/Պռավովեդենիե. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	12,000	12,000	12,000
25	22111120/30/10/2	գրադարանի գրքեր/Կուլտուռոլոգիա. Ուչեբնիկ դլյա վոեննիխ վուզով	11,000	11,000	11,000
26	22111120/31/10/2	գրադարանի գրքեր/Լիդերստվո. Հարվրդ Բիզնես Ռիվյու 10 լուչշիխ ստատեյ	7,000	7,000	7,000
27	22111120/32/10/2	գրադարանի գրքեր/Փսիխոլոգիա լիդերստվա. Հարվրդ Բիզնես Ռիվյու 10 լուչշիխ ստատեյ	9,000	9,000	9,000
28	22111120/33/10/2	գրադարանի գրքեր/Լիդերստվո. Ուչեբնիկ ի պրակտիկում	16,000	16,000	16,000
29	22111120/34/10/2	գրադարանի գրքեր/Փսիխոլոգիա վոյնի. Պրոգնոզիռովանիե սոստոյանիա, պովեդենիա ի դեյատելնոստի լյուդեյ	18,000	18,000	18,000
30	22111120/35/10/2	գրադարանի գրքեր/Տեխնոլոգիա լիդերստվա	7,000	7,000	7,000
31	22111120/36/10/2	գրադարանի գրքեր/Էքոնոմի օֆ Ազերբայջան (Էքոնոմի ըն քանթրիս)	9,000	9,000	9,000
32	22111120/37/10/2	գրադարանի գրքեր/ՆԱՏՕ վ սովրեմենոյ միռովոյ պոլիտիկե	12,000	12,000	12,000
33	22111120/38/10/2	գրադարանի գրքեր/Վոեննայա գեոգրաֆիա դլյա պրոֆեսսիոնալով ի նեպրոֆեսսիոնալով	7,000	7,000	7,000
34	22111120/39/10/2	գրադարանի գրքեր/Սոցիալնայա պոլիտիկա վ սիստեմե գոսուդառսկո-վոեննիխ օտնոշենիյ	7,000	7,000	7,000
35	22111120/40/10/2	գրադարանի գրքեր/Տուման գիբրիդնոյ վոյնի. Նեոպրեդելոննոստի ի ռիսկի կոնֆլիկտով XXI վեկա	11,000	11,000	11,000
36	22111120/41/10/2	գրադարանի գրքեր/Ինֆորմացիոննիե ի գիբրիդնիե կոնֆլիկտի. Ուչեբնոե պոսոբիե դլյա	11,000	11,000	11,000

		վուզով			
37	22111120/42/10/2	գրադարանի գրքեր Կառ եսա կառ վ վոննոյ խատրիի. Սրավար	7,000	7,000	7,000
38	22111120/43/10/2	գրադարանի գրքեր Տանկի ի բոնոտեխնիկա	9,000	9,000	9,000
39	22111120/44/10/2	գրադարանի գրքեր/Սամոե սովրեմեննոե օռուժիե ի բոեվայա տեխնիկա	11,000	11,000	11,000
40	22111120/45/10/2	գրադարանի գրքեր/Օռուժիե սովրեմեննիխ վոյն. Բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոռուժենիա ի մեռի պրոտիվոդեյստվիա իխ պրիմենենիյու	7,000	7,000	7,000
41	22111120/46/10/2	գրադարանի գրքեր/Ռազվեդկա ի կոնտռռազվեդկա	6,000	6,000	6,000
42	22111120/47/10/2	գրադարանի գրքեր/Կույսուռոլոգիա ի վոեննոե դելո. Ուչեբնոե պոսոբիե դլյա վուզով	8,000	8,000	8,000
43	22111120/48/10/2	գրադարանի գրքեր/Օռուժիե սովրեմեննիխ վոյն. Բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոռուժենիա ի մեռի պրոտիվոդեյստվիա իխ պրիմենենիյու	7,000	7,000	7,000
44	22111120/49/10/2	գրադարանի գրքեր/Սովրեմեննոե օռուժիե. Իլյուստրիռովաննայա էնցիկլոպեդիա	16,000	16,000	16,000
45	22111120/50/10/2	գրադարանի գրքեր/Օն Օփիրեշընլ Արթ	15,000	15,000	15,000
46	22111120/51/10/2	գրադարանի գրքեր/Վոեննոե խոլոդնոե վեռմախտա. Օտ բլիցկրիգա դո պորաժենիա	5,000	5,000	5,000
47	22111120/52/10/2	գրադարանի գրքեր/16 Քեյս օֆ Միշըն Քըմանդ	21,000	21,000	21,000
Ընդամենը					963,987

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ս.Ա.Ն. ԲՐԱՅԹ» ՍՊԸ տնօրեն

Կ. ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն